

ԼՈՒՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌԻՑ

ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՄ

Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքի գահակալության նախօրեին Երուսաղեմի Հայոց Պատրիարքական ողջ միաբանությունը գերշ. Տ. Դավիթ եպս. Սահակյանին ընտրեց Ս. Աթոռի լուսարարապետի բարձր պաշտոնին: Այս պատասխանատու պաշտոնը երկար տարիներ վարել էր գերշ. Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, որը, սակայն, հոկտեմբեր ամսի սկզբին ընտրվեց Թուրքիայի հայոց Պատրիարք:

Երուսաղեմի Պատրիարքության մեջ լուսարարապետությունը երկրորդ կարևոր պաշտոնն է համարվում: Լուսարարապետը հսկում է սրբատեղերի հայոց իրավունքները, եկեղեցական գույքի պահպանությունը, ժամակարգությունների և կրոնական բնույթ ունեցող զանազան գործերի կարգադրությունները:

Նվիրական այս պաշտոնի համար առաջ էին քաշված Երուսաղեմի միաբանության չորս անդամների թեկնածություններ՝ Երուսաղեմի Պատրիարքարանի դիվանապետ Տ. Դավիթ եպս. Սահակյան, Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանի երկարամյա տեսուչ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյան, Միացյալ Նահանգներում պաշտոնավարող Տ. Նուրհան վրդ. Մանուկյան և Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպս. Պալիոզյան: Սակայն ընտրությունից առաջ Տ. Աղան եպիսկոպոսը հանեց իր թեկնածությունը:

Հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ ընտրական ժողով, որի քվեարկությանը մասնակցում էին Սրբոց Հակոբյանց միաբանության 44 անդամներից 32-ը: Ձայների մեծամասնությամբ Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ ընտրվեց Աթոռիս դիվանապետ Տ. Դավիթ եպս. Սահակյանը:

Գերշ. Տ. Դավիթ եպս. Սահակյանը ծնվել է 1935 թ. Երուսաղեմում: Երկար տարիներ ծառայել է սփյուռքի զանազան գաղթօջախներում: Տիրապետում է անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներին: Երկու տարի առաջ Տ. Դավիթ եպիսկոպոսը վերադարձել է Երուսաղեմ և ստանձնել Պատրիարքության դիվանապետի պաշտոնը:

Ընտրությունից անմիջապես հետո, Ս. Հակոբի զանգերի ղողանջների ներքո, Երուսաղեմի հայությունը շտապում էր Մայր տաճար՝ մասնակից լինելու այս ուրախ առիթով կազմակերպված եկեղեցական թափորին: Գերշ. Տ. Թորգոմ Պատրիարքի առաջնորդությամբ, թափորը հանդիսավորությամբ մտնում է ս. եկեղեցի, ուր Տ. Դավիթ եպս. Սահակյանը գոհաբանական աղոթք է կարդում: Այս ուրախ առիթով Պատրիարք Հայրն իր շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքն է ասում՝ հույս հայտնելով, որ նորընտիր լուսարարապետը կարդարացնի բոլորի ակնկալիքները:

Դավիթ սրբազանը իր պատասխան խոսքում նշեց, որ, հակառակ իր ունեցած այս բարձր պաշտոնին, իրեն նկատում է որպես մի պարզ հոգևորական, որը սիրում է կարդալ Ս. Գիրքը և ծառայել Աստծուն:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի գահակալության հանդիսավոր արարողությունից երեք օր անց, հոկտեմբերի 31-ին, Սրբազան Պատրիարքը պաշտոնական այցելություն տվեց Իսրայելի նախագահ Հայիմ Հերցոգին:

Այցելության ընթացքում Պատրիարք Հորն ընկերակցում էին նորընտիր լուսարարապետ գերշ. Տ. Դավիթ եպս. Սահակյանը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ներկայացուցիչ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Մարսելում կաթողիկոսական պատվիրակի փոխանորդ Տ. Հակոբ եպս. Վարդանյանը, Բուլղարիայի և Ռումինիայի միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ եպս. Մուրադյանը և Հորդանանի հայության հոգևոր տեսուչ Տ. Վահան եպս. Թոփալյանը:

Հանդիպման ժամանակ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Իսրայելի կառավարությանը շնորհակալություն հայտնեց այն առաջնահերթ օգնության համար, որ Իսրայելի պետությունը ցուցաբերեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժի ժամանակ:

Հայ Եկեղեցու առաջնորդները և Իսրայելի նախագահը այս կարճ հանդիպման ընթացքում զրուցեցին Իսրայելի կառավարության և հայ համայնքի միջև գոյություն ունեցող ջերմ հարաբերությունների մասին և հույս հայտնեցին, որ այս բարյացակամ փոխհարաբերությունները հետզհետե ավելի պիտի զարգանան ու աճեն:

Պատրիարք Հայրը նաև իր մտահոգությունները հայտնեց արաբ-հրեա կրոնական և քաղաքական ծայրահեղության հասած հակամարտության վերաբերյալ: Նա շեշտեց, որ տարբեր հակասությունների ավելի ճիշտ լուծումը բանակցությունների և փոխհասկացողությունների ճանապարհն է:

Նախագահ Հայիմ Հերցոգն էլ իր հերթին հույս հայտնեց, որ Ս. Երկրում բնակվող տարբեր փոքրամասնությունների միջև ավելի սերտ և հաստատուն

հարաբերություններ պետք է գոյանան: Հարգելի նախագահը իր խոր հիացմունքն ու հետաքրքրությունը հայտնեց հայկական ձեռագրերի և ձեռագրաց արվեստի մասին:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

1990 թ. նոյեմբերի 7-ին Երուսաղեմի թատրոնի դահլիճում իր լուսանկարչական արվեստի անհատական ցուցահանդեսն էր կազմակերպել հրեա արվեստագիտուհի Շայ Զաքան: Այս ցուցահանդեսը նա անվանել էր «Հեռավոր մտերմություն», որն արտահայտում էր թե՛ հեռավորության և թե՛ մտերմության գաղափարներն ու զգացումները հայ ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ:

Շայ Զաքան ավելի քան երկու տարի մոտիկից ծանոթացել էր Սրբոց Հակոբյանց վանքի գործունեությանը, Մայրավանքում պահպանվող ազգային ու մշակութային հարստություններին: Շփվելով երուսաղեմաբնակ հայության հետ, նա անտեսանելի մի թելով կապվել էր նրանց հետ ու վայելում էր հայության խոր հարգանքը:

Ցուցահանդեսի նկարներն արտահայտում էին մի փոքրիկ աշխարհի պատկեր, որը մեկուսացված պարսպի պատերի ետևում, իր յուրահատուկ կյանքով, ազգային ավանդություններով մի գեղեցիկ անկյուն է հանդիսանում Երուսաղեմում:

Գեղեցիկ պաստառները ներկայացնում էին մկրտության արարողության տեսարաններ, պատանի ժառանգավոր սաներին, Սրբոց Հակոբյանց մխաբանության անդամներին և Ս. Թարգմանչաց վարժարանի աշակերտությանը: Ներկայացվում էին նաև Ս. Հակոբյանց վանքի այնպիսի թաղամասեր, որոնք մատչելի չեն սովորական այցելուի համար:

Ցուցահանդեսի բացումը կատարեցին Թորգոմ Պատրիարքը և Երուսաղեմի քաղաքագլուխ Թեդի Քոլեքը:

Բացման խոսքով հանդես եկավ Սրբազան Պատրիարք Հայրը: Նա նշեց, որ 150 տարի առաջ Եսայի Պատրիարք Կարապետյանն էր, որ առաջին լուսանկարչական արվեստանոցը հիմնեց Երուսաղեմում: Նրա նկարած գեղեցիկ պատկերներն այսօր ցուցադրվում են Էդուարդ և Մարի Մարտիկյան ցուցահանդեսում:

Թորգոմ Պատրիարքը բարձր գնահատեց Շայ Զաքայի աշխատանքը և ի մասնավորի ասաց. «Ուրախ ենք, որ Շայ Զաքայ այն անձնաւորութիւնն է՝ մին է, որ իր եռանդուն ջանքերով փորձեց հայ գաղութի խորքը թափանցել եւ անոնց գնահատանքին արժանանալ: Երկու տարիէ ի վեր, ան կը հետեւէր մեր գաղութի կեանքին, յայտնի անձ մը դառնալով՝ հայ միջավայրին մէջ: Արուեստագէտը կը սիրէ երեխաները, ինչպէս անոնք արտացոլուած են իր գործերուն մէջ»:

ԻՍՐԱՅԵԼԻ ԿՐՈՆԻՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

1990 թ. նոյեմբերի 21-ին Իսրայելի կրոնից նորընտիր նախարար Ավներ Շաքին պաշտոնական այցելություն կատարեց Երուսաղեմի հայոց Պատրիարք գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին:

Նախարարին ընկերակցում էին նախարարության ընդհանուր տնօրեն

Նիսսիմ Տաննան, նախարարության քրիստոնեական բաժանմունքի տնօրեն Ուրի Մորը և նախարարության Արևմտյան ափի կրոնական հարցերի պատասխանատու Շմվել Համբերգերը:

Պատրիարքարանի մուտքի առջև նախարարին ընդունեց Ս. Աթոռի լուսարարապետ Տ. Դավիթ եպս. Սահակյանը և առաջնորդեց Պատրիարքարանի դահլիճ:

Ավներ Շաքին, Ամենապատիվ Պատրիարք Հոր գահակալության առթիվ, հայտնեց Իսրայելի կառավարության պաշտոնական շնորհավորանքները:

Սրբազան Պատրիարքն իր խորին շնորհակալությունը հայտնեց կրոնից նախարար Ավներ Շաքիին և իր մտահոգությունները արտահայտեց Մերձավոր Արևելքում պայթյունալի իրավիճակի շուրջ:

Թորգոմ Պատրիարքը խաղաղության մաղթանք կատարեց և նախարարին հայտնեց, որ Երուսաղեմի հայոց եկեղեցիներում մշտապես աղոթում են խաղաղության համար:

Կրոնից նախարարի և Սրբազան Պատրիարքի հանդիպումն անցավ ջերմ ու բարյացակամ մթնոլորտում:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՅՑԸ ՀԱՅՖԱՅԻ ԵՎ ՅԱՖԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Պաղեստինի այս հնամենի քաղաքներում հայերը հաստատվել են ԺԷ—ԺԸ դարերում, Օսմանյան տիրապետության շրջանին: Բայց հայկական ավելի հոծ զանգվածներ գաղթել են այս շրջաններ 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի ժամանակ և ապաստան գտել Հայֆայի, Յաֆայի, Աքքեյի, Աթլիթի և հյուսիսային Պաղեստինի այլ քաղաքների մեջ:

Պաղեստինի հայ գաղթօջախների պատմության մեջ Հայֆայի և Յաֆայի գաղութները կարևոր դեր են խաղացել թե՛ ազգային և թե՛ մշակութային առումով: Միջերկրականի ծովափնյա այս զույգ քաղաքները հարյուրամյակներ ի վեր կապված են եղել Երուսաղեմի Ս. Աթոռին:

Հայֆայի գաղութը ավելի կազմակերպված տեսք է ստանում ԺԹ դարի առաջին կեսից: 1927 թ. հայֆայաբնակ հայերի ուժերով հիմնվում է եկեղեցի: Այժմ Հայֆայի մեջ բնակվում են ավելի քան չորս հարյուր հայեր (70 ընտանիք):

Հայֆայի հարակից շրջաններն են Նազարեթը, Աքքեն և Ռաման, որտեղ բնակվում են քսանհինգ հայ ընտանիքներ: Հայֆայի մեջ գործում են Հ. Մ. Ը. Մ.-ն և Հ. Օ. Մ.-ն: 1920 թ. սկսյալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը և Հայ Երիտասարդաց Միությունը իրենց մասնաճյուղերն են հաստատել Հայֆայի մեջ: Կիրակնօրյա դպրոցում ավանդվում են հայերեն դասեր՝ հոգևոր հովվի և նվիրյալ ուսուցիչների կողմից:

Սրբազան Պատրիարքի այցելությունը Հայֆա տեղի ունեցավ նոյեմբերի 23—25-ը: Հայֆայի հայությունը մեծ խանդավառությամբ դիմավորեց նորընտիր Պատրիարքին: Այս բացառիկ առիթով համայնքը, ի պատիվ Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Հայֆայի Հ. Մ. Ը. Մ. ակումբում ճաշկերույթ էր կազմակերպել: Հյուրասիրությանը ներկա էին տեղի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Անուշավան ծ. վրդ. Զղջանյանը, գավազանակիր Տ. Համբար-

ձում վրդ. Քեշիշյանը, գաղութի երևելի անձինք, ինչպես նաև Հայֆայի, Նազարեթի և Աքքեյի կրոնական համայնքների պետերը:

Գաղութի հոգևոր հովիվը Սրբազան Պատրիարքին հղած իր խոսքում ողջունեց նրա այցը և հույս հայտնեց, որ Թորգոմ Պատրիարքի գահակալության շրջանը պիտի լինի կրոնական, ազգային և մշակութային վերազարթոնքի մի շրջան:

Շնորհավորանքի և բարեմաղթության խոսքեր ասացին նաև ակումբի ատենապետ Երեմ Լափաճյանը և Հայֆայի համալսարանի դասախոս օր. Ժորժեթ Ավագյանը:

Ակումբի երիտասարդ-երիտասարդուհիները խանդավառությամբ արտասանեցին և երգեցին հայերեն գեղեցիկ երգեր:

Թորգոմ Պատրիարքն իր խոր զգացումներն արտահայտեց և շնորհակալություն հայտնեց հայ համայնքի ղեկավարներին՝ իրենց կազմակերպած այս ջերմ ընդունելության համար: Նա, իր խոսքն ուղղելով համայնքի ներկայացուցիչներին, ի մասնավորի ասաց. «Հարկաւոր է մեր եկեղեցական եւ ազգային արժէքները կենդանի պահել եւ մեր աշխատանքը կեդրոնացնել մեր նորահաս սերունդին վրայ, անոնց ջամբելով մեր Հայեցի արժէքներու հպարտութիւնը»:

Հաջորդ օրը, նոյեմբերի 24-ին, Պատրիարք Հայրն իր անդրանիկ պատարագը մատուցեց Ս. Եղիա մատուռում: Հայ հավատացյալների հոծ բազմություն էր հավաքվել այնտեղ: Ս. պատարագին իր մասնակցությունն էր բերել Հայֆայի երկսեռ երգչախումբը: Սրբազան Պատրիարքը ս. պատարագի վերջում հավուր պատշաճի բովանդակալից քարոզ խոսեց: Սրբազան արարողությունից հետո Թայպե գյուղում, ի պատիվ Պատրիարք Հոր, ճաշկերույթ կազմակերպվեց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՅԱՖԱ

Յաֆայի հայ գաղութը կազմավորվել է 1780 թ. շուրջ: Այստեղ էլ, ծովեզերյա գեղատեսիլ մի վայրում, հայերը հիմնել են եկեղեցի՝ Ս. Նիկողայոս անունով: Այժմ Յաֆայի մեջ ապրում են երեք հարյուր հայեր (60 ընտանիք): Այստեղ ևս գործում են Հ. Մ. Ը. Մ. և Հ. Օ. Մ. ակումբները: Իր ազգանվեր գործունեությունն է ծավալում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

Յաֆան, որպես նավահանգստային քաղաք, իր հերթին կարևոր դեր է խաղացել երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային և ազգային կյանքում: Տեղի հայերը հիմնականում զբաղվել են արհեստագործությամբ և առևտրով՝ իրենց մասնակցությունը բերելով քաղաքի ընկերային-տնտեսական կյանքի բարգավաճմանը:

Հայֆա կատարած պաշտոնական այցելությունից հետո, Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը դեկտեմբերի 7-ին իր հայրական օրհնությունը բերեց Յաֆայի հայ գաղթօջախին: Այստեղ գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին խանդավառությամբ ընդունեցին համայնքի միօրյա վարժարանի ուսուցչական կազմը, ողջ աշակերտությունը և գաղութի անդամները: Ընդունելությունը տեղի ունեցավ Յաֆայի եկեղեցու մեջ, ուր ներկա էին նաև համայնքի կրոնական պետերը:

Բացման խոսքում պրն. Սարգիս Յաղուբյանը բարի գալուստ մաղթեց Սրբազան Հորը և հայտնեց Յաֆայի հայության ուրախությունը այս բացառիկ առիթով:

Տեղի Հ. Օ. Մ. տիկնանց հանձնախմբի կողմից խոսեց օր. Աղավնի Գրիգորյանը և ի մասնավորի ասաց. «Բոլորիս համար մեծ ուրախութեան օր մըն է այս օրը: Պատրիարքի ներկայութիւնը մեր բոլորին կը խանդավառէ եւ մեզ աւելի եռանդով կը մղէ մեր ազգային-կրօնական և դաստիարակչական պարտականութիւններուն»:

Յաֆայի հոգևոր հովիվ Տ. Անուշավան ծ. վրդ. Զոլջանյանը նույնպես ողջունեց Սրբազան Պատրիարքի այցելությունը և որդիական խոնարհությամբ պարտավորվեց՝ կարողությունների առավելագույնը ներդնել համայնքի ազգային-հոգևոր կյանքը կազմակերպելու գործում: Ապա միօրյա վարժարանի սաները հանդես եկան երգերով և արտասանություններով՝ հայեցի գեղեցիկ շնչով ու ոգևորությամբ:

Թորգոմ Պատրիարքն իր հուզմունքն ու գոհունակությունը հայտնեց Յաֆայի հայությանը, քաջալերեց նրանց, որ հետ այսու ավելի նվիրումով ու առավել զոհողությամբ լծվեն ազգապահպան սրբազան գործին:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 8-ին, գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը հանդիսավոր պատարագ մատուցեց Յաֆայի Ս. Նիկողայոս մատրան մեջ: Պատրիարք Հայրն իր քարոզում անդրադարձավ Հայաստանի ավերիչ երկրաշարժի և նրա հետևանքների շուտափույթ վերացման գործում համայն հայության առջև ծառացած հարցերի մասին: Նա շեշտեց, որ Մայր Հայրենիքում, մանավանդ վիրավորներն ու երկրաշարժից վերապրողները, կարիքն ունեն քրիստոնեական ճշմարիտ կրոնի ուսուցման և հոգևոր մխիթարության:

Հավարտ ս. պատարագի, նախագահությամբ Ամենապատիվ Սրբազան Հոր, կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի զոհերի:

Պատրիարք Հոր այցելությունը Հայֆայի և Յաֆայի հայ համայնքներին ավելի ջերմացրեց ազգային-հոգևոր կյանքը այս երկու քաղաքներում:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԲԵԹՂԵՀԵՄ

Սրբազան Պատրիարք Հայրը նոյեմբերի 30-ին, Սրբոց Հակոբյանց միաբանության անդամների ընկերակցությամբ, Մայրավանքից ուղղվեց դեպի հարավ՝ Ս. Ծննդյան քաղաք՝ տալու համար պատրիարքական առաջին պաշտոնական այցելությունը քրիստոնեական հնագույն Տաճարին և երկրորդ մեծագույն Սրբավայրին:

Բեթղեհեմի Ս. Ծննդյան հրապարակում հուզումով և ուրախությամբ սպասում էին դպրաց դասը՝ Բեթղեհեմի վանորեից տեսչի գլխավորությամբ, և Ս. Թարգմանչաց վարժարանի աշակերտությունը: Այնտեղ էին նաև Բեթղեհեմի քաղաքապետը, զինվորական կառավարիչը և շրջակա գյուղերի թաղապետերը: Հանդիսավոր թափորին իրենց մասնակցությունն էին բերել Ս. Ծնընդյան վանորեից հունաց և լատինաց տեսուչները:

«Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ Սրբազան Պատրիարքը և միաբանությունը, անցնելով տաճարի այունազարդ դահլիճով, իջավ Ս. Ծը-

ընդդյան այր, որտեղ կարդացվեց Ս. Ծննդյան Ավետարանը և երգվեց «Փառք ի բարձունս» հրեշտակային օրհներգը: Սրբազան Պատրիարքը և թափորի մասնակիցները կատարեցին նաև իրենց ուխտի երկրպագությունը Ս. Այրին ու Մուրին:

Ապա թափորականները բարձրացան Տաճարի հայկական բաժինը, ուր Նորին Ամենապատվությունը իր օրհնությունը տվեց ներկաներին:

Սրբազան Պատրիարք Հայրը Բեթղեհեմի հրապարակում

Պատրիարք Հորը շնորհավորանքի և բարեմաղթանքի ջերմ խոսքեր ասացին քաղաքապետ Էլիաս Ֆրեյնը և հայ համայնքի Մուխթարը:

Իր պատասխան խոսքում գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ այս ջերմ ընդունելության համար:

Ապա Պատրիարք Հայրը վանքի սրահներից մեկում հանդիպում ունեցավ բեթղեհեմցի և Երուսաղեմից եկած հայերի հետ: Նա քաջալերեց հավատավոր հայորդիներին և կոչ արեց՝ կազմակերպել հայկական դպրոց՝ մանուկներին և պատանիներին հայեցի դաստիարակություն ավանդելու համար:

Սրբազան Պատրիարքի այցելությամբ հարգվեց նաև Ս. Տեղաց այն ավանդությունը, ըստ որի Երուսաղեմի երեք Պատրիարքները, իրենց ընտրությունից անմիջապես հետո, պետք է պաշտոնական այցելություն կատարեն թե՛ Ս. Հարության և թե՛ Ս. Ծննդյան տաճարներ:

ԷԴՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ